‘ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ գյուղի N2 միջնակարգ դպրոց’ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ «Տեխնոլոգիա» (տղաների խումբ) (8 դասաժամ) , «Ֆիզկուլտուրա» (6 դասաժամ) և «Երաժշտություն» (6 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1. դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3. անձը հաստատող փաստաթուղթ,

4. ‘Հանրակրթության մասին’ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

5. ինքնակենսագրություն (Ձեւ 5),

6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը նշված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, համեմատելուց հետո բնօրինակները վերադարձնում:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթները տեղի կունենան սեպտեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ից, Կարմիրգյուղի N2 միջնակարգ դպրոցի շենքում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Կարմիրգյուղ, N2 միջնակարգ դպրոց, Գարեգին Նժդեհի փ. 28, հեռախոս 094206651: